Դրանք չը գիտեն մինչև անգամ թէ իրանց յանձնած (թէև ոչ ոք չ. յանձնել) դպրոցները ինչ դրութեան մէջ են, քանի ուսուցիչ ունեն և թէ դրանք պարապում են թէ ոչ: Դրանք այնպիսի կուսակիցներ ունեն, որ մինչև նրանց զօրով չը դուրս անեն, նրանք երբէք մտադիր չեն մինչև ի մահը իրանց պաշտօնից - փառք ու պատուից հեռանալ: Անցեալ տարիներում «Մշակում» շատ է գրվել դրանց վրա, բայց ուշադրութիւն դարձնող չը կայ: Պ. յօդուածագիրն ասում է թէ՝ «ամենայն 1-ին դպրոցները օրշնեցին և սկսեցին նորեկների ընդունելութիւնը, բայց երբ պէտք է վերջանայ նրանց ընդունելութիւնը, կամ երբ պէտք է սկսվի կանոնաւոր ուսումը, այդ միայն Աստուծուն է յայտնի»: Մինչ սրանումն էլ հոգաբարձուներին պէտք է մեղադրել, չէ որ ուսումնական մասը յանձնված է աւագ ուսուցչին, ինչու են շարունակում նորեկների ընդունելութիւնը, մինչ նրանք որ և իցէ նախագիծ չունեն, թէ մինչև երբ պէտք է շարունակել ընդունելութիւնը: Յօդուածը սեպտեմբերի 2-ից է, ուրեմն վերոյիշեալ ուսումնարաններում երբ է սկսվել աշակերտաց ընդունելութիւնը: Երևի արձակուրդներն կամ միայն սեպ. 1-ին: Ինչպէս իսկոյն երևում է, որ կրթից շարժված է գրված: Մինչ պ. Մ. Նորեկներին աշակերտների թւում չէ հաշում, որ զարմանքով հարցնում է թէ՝ «ես չեմ հասկանում, թէ ում համար է ըսխվելու ուսումը, երբ աշակերտներ չը կան, երբ ուսումնարանը դատարկվել է աշակերտներից»: Ինչու է դատարկվել, ով է մեղաւոր: Ուղիղ է, մասամբ տեսուչ է մեղաւոր, որ ուսաց լեզուի ուսուցիչ խոստացաւ բերել տալ անցեալ տարի և իր խօսքին տէր չը կայաւ: Մասամբ հոգաբարձուներն են մեղաւոր, որ նրանց առաջարկութեամբ կազմակերպվեցաւ մանկավարժական հրմտութիւնից զուրկ դպրոցական կրօնաւորացիս, բայց մեղաւորութեան մեծ մասը ընկնում է աւագ ուսուցչին, որի պարտաւորութիւնն է մեր դպրոցների վրա հսկել: Ինչու մեր դպրոցները Լաղրանցի կամ ուրիշների ժամանակ չէին դատարկվում: Այս երևոյթը ինչու: Մուրադեանցի ժամանակ երևաց: «Ժողովուրդը յուզված է», ասում է թղթակիցը. ժողովուրդը դպրոցների վերաբերութեամբ երբէք չի յուզվի, որովհետև նա անտարբեր է, նրա համար հաստ ու բարակ մի գին ունէ: Մինչ մեր դպրոցների համար մասնաւոր դպրոցները կը փակվեն: Երևում է, որ ժողովուրդը մասնաւոր դպրոցներին աւելի է համակրում: Փոխեցէք հոգաբարձուներին, ընտրեցէք նոր ինտելիգենցիա, կազմակերպեցէք օրշնաւոր ուսուցչական խումբը և դուք կունենաք բարեկարգ դպրոցներ շատ աշակերտներով: Դուք յարձակվում էք ուսաց լեզուի ուսուցչի վրա, իսկ մեներին անուշադիր էք թողնում: Այդ ինչ երևոյթաստութիւն է: Ասացէք խնդրեմ, ինչ ընդունակութիւններ ունի աւագ ուսուցիչը, որը մի և նոյն ժամանակ հայոց լեզուի և կրօնի ուսուցիչ է: Նա ինչ է շինել անցեալ տարի և ինչ պէտք է շինէ այժմ: Մինչ նա ամբողջ տարի իր տեսանելութեան պատճառով այնպէս բացակայ էր, ինչպէս ուսաց լեզուի ուսուցիչը իր ազոլատութեան ժամանակը: Նստային որ մի և նոյն ժամանակ գեղագրութիւն է սովորեցնում, մինչ կարող է իր ազգանունը ուղիղ ստորագրել: Մինչ նրա անտէսի ձայնը իր աներաղաշնակ նոտայի տեսակ չեն խոցում ձեր սիրտը, որ նրա պէտերի վրա բոլորովին լռում էք: Ում մտօգով է անցնում քանոնները աշակերտների ձեռներին խփելը և ականջներից քաշքշելը. Պեստալոցցի թէ Դիստերվեգի: Առհասարակ պէտք է աւելի ուշադրութիւն դարձնել դպրոցների վրա:

Կախեթեցի

## ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Սեպտեմբերի 23

«Մեղուի» խմբագիրը, որ քան և երկա տարվա ընթացքում ենթում է ու ենթում և չ ուզում գոնէ մի ժամ անգամ բանալ աչքերը և տեսնել թէ այդ ինչ է, որ դրոշված է մեծ մեծ տառերով իր լրագրի ճակատի վրա, բանալ միտքը և հասկանալ թէ այդ ինչ է նշանակում, որ կրում է իր խառնաբարբար մտքով խմբագրված լրագիրը «Մեղու Հայաստանի». արդեօք մի օր կամ մի ժամ մտածել է նա գրա վրա, թէ միայն ընկած լինելով իր նման մի քանի խառնաբարբի և շղոքարքարութիւն սիրող անձնց ազդեցութեան տակ, ինչպէս են Ինչիան, Գ. Ն. և այն, որը չէ հասկանում թէ ինչ է անում... հասկացել է արդեօք Քաղքցի ստորագրութեամբ ֆիլիտոնների մի քանի տողերը, որոնք շիրիրընկալութիւն են գտել իր լրագրի էջերի մէջ և որոնք ասում են. «Պեղեն ու կրակ մնաց «Մեղուի» խմբագրի անձը, եթէ յիշում էք հին անցքը: 15 տարի առաջ ողորմելուն հալածեցին իրրև բռնզբական, Բաղչլից և Ամիրեկիից Նպատա ստացող ագգակործան այժմ էլ «Մշակը» ու նրա արբանեակ խելոքները կրքում են նրան մոլուանդ լուսաւորչական»: Բայց մենք ցաւում ենք որ յօդուածագիրը չէ աւելացրել վատաբարէ և ցնորամիտութիւն քարոզող» մականունները, վասն զի «Մշակը» մէջտ անուանել է և անուանելու է «Մեղուին» այդպէս, մինչև որ նա չի փոխի այդ իր ընտրած ուղղութիւնը: Զարմանում ենք. որ «Մեղուն» չէ հասկանում թէ՝ ինչու առաջ նրան բռնզբական էին անուանում, իսկ այժմ մոլուանդ լուսաւորչական. Շատ պարզ է. նա այն ժամանակ չէր հասկացել թէ ինչ է գոյում, այժմ էլ չէ հասկանում ինչ է անում. ով է իմանում թէ այն ժամանակը որպիսի անձնց ազդեցութեան տակ էր ընկած... Մենք չենք մեղադրում նրան, որովհետև նա անհասկացողութեամբ է անում ամեն ինչ. նա չունի իր տեսչական համոզմունքը: Բաւական է, ինչ որ գրեց, թող բացէ աչքերը և տեսնէ, որ նրա վրա ծիծաղում են մինչև անգամ իր արտակիցները, որոնք նրանից շինել են մի մելքնայ, որ որ կոզմը ուզում են, այն կողմը դարձնում են: Թող տեսնէ վերջապէս թէ ինչ է կատարվում Հայաստանում, թողնի կրծի իսրուբինները և ազգային միութիւն քարոզէ, ինչպէս անում է «Մշակը», եթէ ոչ աւելի լաւ կը լինի որ դադարէ իր հրատարակութիւնը, կամ ֆելիետոնների լցնէ իր թերթը, որովհետև բացի ֆելիետոններից, որոնք կարող են գտնվ փորը ինչ զուարճացնել ընթերցողին, ուրիշ կարգաւոր արժանի բան չը կայ նրա թերթերի մէջ: Մենաց յօդուածները միայն զայրոյթ և զզվանք են պատճառում ընթերցողին:

Ես կարծում եմ, որ «Մեղուի» պատուի խմբագիրը սատկի կոտրանաս, երբ լսէ որ Ալէքսանդրապոլում, ուր արդէն կայ կանոնած մի շինական, ինչ նրա նման մի ուրիշ եկեղեցի են կանգնեցնում, որ 80.000 ռուբլով հազիւ թէ շինվի, իսկ այդ բաղամանաս շինութեան համար 50.000 ռուբլի պատրաստի գրամագլուխ կայ միայն, ուրեմն պակասորդը ունիլ պէտք է առնեն: Դառնալով այդ հիմարակութիւնը ձեռնարկող ինքնակոչ երեցփոխանեներին հարցնում ենք նրանց. ով է ընտրել արդեօք նրանց հոգաբարձու այդ եկեղեցին կառուցանելու համար, այն էլ այդպիսի մի բաղամանաս եկեղեցի, ինչ կարտութիւն կար ծախսել հասարակութեան փողը այդպիսի եկեղեցի կառուցանելու համար, մինչև այդ մի եկեղեցու վրա արած ծախսով կարելի էր երկու հասարակաչէն եկեղեցիներ կառուցանել քաղաքի հեռաւոր ծայրերում, որտեղից եկեղեցի յանձնելը մեծ նեղութիւններ է պատճառում հասարակութիւնը վատ եղանակների ժամանակ. մինչ հասարակութիւնը չէր կարող ազոնել հասարակաչէն եկեղեցու մէջ. կամ մի գուշէ կարծում էք, թէ մինչև դարերում են ապրում, որ թշնամու արշաւանքներից պատսպարվելու համար ամրոց են կառուցանում իրանց համար. և ինչ են կարծում. այդպիսի վարմունքով այժմ էլ կարող են խաբել հասարակութիւնը, կարծելով թէ նա դեռ մոլուանդ է, իսաւոր է այդ կարծիքը «Մեղուի» վրա միայն կարելի է ունենալ և ուրախութեամբ կը լցնէ չինովնիների գրպանները առատ նուիրատուութեամբ, իսկ նրանք կաւելացնեն իրանց սեպհական խաղեմիների և ոսների թիւը... ոչ, սխալ են. նա այժմ էլ չի խաբվի ձեզ պէսներից. նա այժմ մեծ գործ է տեսնում իր առջև, որին չի խնայի իր վերջին կոպէկը, իսկ ձեզ միայն արհամարական հայացքով կը հեռացնէ իրանից:

Բայց ինչ է անում մեր տեսակցող, լուսաւորված, գիպոմատոր Բ. և մինչ չէ տեսնում այդ անմիխիթար երևոյթները, որ բոլորովին անտարբեր, ձայնը փոքր քաշած շողոքորթում է այս ինչ հարուստին, գրատում է այն ինչ Ծառայողին, կեղծ ազգասէր է ձևացնում իրան, որպէս զի գրավէ ամբողջ հասարակութիւնը և նրա քաղաքական ամոռի վրա բազմի... Ինչ, մի գուշէ ինքնակոչ հոգաբարձուների պէս, նա էլ կարծում է թէ հասարակութիւնը միամիտ է և կը խաբվի. ոչ, թող նա էլ լաւ իմանայ, որ կան այնպիսի սուր աչքեր, որոնք թաքնվում են նրա դրսի խորքերը. թող նա էլ քաջ իմանայ, որ հասարակութեան մեծամասնութիւնը արդէն շատ լաւ է ճանաչել նրա տգիտն, հասկացել նրա գործունէութիւնը. նա արդէն ունի իր սիրելին և ընտրելին, և կը գայ ժամանակ, երբ պարտի բոլոր յոյսերը յօդս կը բաթիանան: Ուրեմն, քանի որ շատ է, թող նա ճանաչի մարդկային պատասխանատուութիւնները, թող զգոյշ անենց, ուր աւելի պատանի կը լինի, ուր գուցէ և ուսանելիներ էլ լինեն չունենա, և ոչ թէ մնայ այստեղ և անմարդավարել զորձեր կատարի, որոնք, իմանայ ով է «Ճշմարտասէրը», ով է «Ստեղծչին»: Այդպէս կը վարվեն մեր արատաւոր մարդիկ. որպէս զի գրավելով նրանցով, ժողովուրդը երև ն չը հանէ նրանց արաւերը:

Սմբ. Պարամանց

## ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Վարչութիւնը յայտնում է հետեւեալ տեսակա առաջին հարկաւորութիւն ն մենեջերների վրա հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 15: Յորնին ալիւրից թխած հացը առաջին տեսակի փուռնոր արժէ 5½ կոպ., երկրորդ տեսակի 4½ կոպ., թիրի մէջ թխած հացը նոյն ալիւրից, առաջին տեսակի, փուռնոր արժէ 6½ կոպ.. երկրորդ 5 կոպ.: Թխած հացը խանութ կը ուղարկվից ցորենի ալիւրի վեր, լաւագ 1 տեսակի արժէ փուռնոր 7½ կոպ., երկրորդը 6 կոպ., երրորդը 5½ կոպ: Տաւարի միսը տեսակի արժէ փուռնոր՝ 8 կոպ., երկրորդը 7 կոպ, սուրի փուռնոր 14 կոպ., ոչխարի մսի մի փուռնոր 9 կոպ., այծինը 7 կոպ.:

—

ՇՈՒՐԱՑԻՑ գրում են մեզ, որ տեղային հոգևոր դպրոցը բոլորովին խանգարված դրութեան մէջ էր գտնում, բայց մի քանի պարոնների ջանքով, այլ և երեցփոխանի ու Գէորգ քահանայ Փարեմուզանցի աշխատութեամբ, դպրոցի համար նոր շէնք կառուցվեցաւ և օգոստոսի 1-ից դպրոցը կրկին բացվեցաւ: Նորընտիր հոգաբարձուների հսկողութեան ներքոյ դպրոցը բաւական բարեկարգ դրութեան մէջ է գտնվում այժմ:

—

Շնորհակալութեամբ ստացանք «Հայկեան Գեղագրութեան» օրինակներ, երկու գրքոյկ, յօրինված Ց. Վ. սիլեանցից, տրատակութիւն Կ. Պոլսի «Մասյաց» Բ. կերութեան:

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: «Անցեալներս Զուգկիում պատահաբար սատակ է դեւի պատճառով մի հայ գերդաստան ընկել է Ինչուա և եղ վիճակ մէջ, իր անեն ցաւն ու կաչ կարաւորը այրված լինելով: Գերդաստանի հայրը, որպէս ծեր և անզօր աշխատելու, յայտնում է իր գիտութիւն Թիֆլիսի մարդասէր հայ անձանց, որ ընդունեն տան մէջ հոգատարելու իր երեք զաւակներին, այն է՝ երկու աղջիկ 6 և 8 տարեկան և մի տղայ 10 տարեկան: Կարող են վերցնել մէկին կամ երեքն ի միասին: Գերդաստան գտնված Զուգրգէլի պէս մի քաղաքում, ուր ուրիշ ոչ մի հայ ընտանիք չը կայ, ծեր հայրը չէ կարող մոռնել իր զաւակներին վախենալով որ նրանք բոլորովին կոտորուեն: Ուստի խնամքարար խնդրում է վերցնեն անտէր մնացած զաւակներին մի որ և է գաղրցի կամ տան մէջ, եթէ ոչ որպէս որդեգիներ, գոնէ որպէս տան փոքրաներ: Խնդրատուն ասելացնում է որ բարեար լինելու ցանկացողները կարող են իրանց հասցէն թողնել «Մշակի» խմբագրատան մէջ և խնդրում է միւս խմբագրիներին արտատպել իրանց թերթի մէջ այդ յայտարարութիւնը:»

—

«Գեորգ» լրագրում կարդում ենք. «Եգիպտոսի Կայիրօ քաղաքում հիմնվեցաւ Հայաստանի սովելոց օգնող Կ. Գալի կիներօնական մասնաժողովի մի ճիւղ: Օգոստոսի 5-ից սկսած այդ մասնաժողովը արդէն կարողացաւ ուղարկել Նէրսէս պատրիարքին 180.000 ֆրանկ: Նոյնպիսի մասնաժողովներ հիմնվեցան հայերի ձեռքով Բուխարէշտում, Սոֆիայում, Վիէնայում, Փարիզում, Մանչեստերում, Լէնդնում, Զմիւռնիայում և Կայրոյում: Բայց դեռ ես այդ կամ տեսների բանվոր, գեսպանների հաւաքելից զատ և տեսելով մեր Թագաւոր Կայսրի օրինակին, շտապեցին և այլ իշխաններ ուղարկել իրանց նուէրները Սերսէս պատրիարքին: Արաբ Էմիր Աստրիայի կայսրը, Անգլիայի թագաւորը, Հելլադայի, Սպանիայի, Բաւարիայի, Ցունաստանի թագաւորները և Հաւսի պարոն Լեոն XIII, Նորվէգիա և Բուլգարիայի և Բոլգարիայի իշխանները: Պարտ ուղարկեց 20,000 ֆրանկ իր օրինակեամբ ամբողջ հայոց ազգին: Այդ հանգամանքին մեծ նշանակութիւն են տալիս, աչքի առնելով որ աւելի քան հինգ տարի շարունակ Վասիլիանը աշխատում էր պահպանել նեղքին կատարի թշնամութիւնը հայ-կաթոլիկների և հայ-գրիգորեանների մէջ:»

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### «ՆԵՐԳԵԼ» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ներգել» լրագրի № 180-ի մէջ կարդում ենք հետեւեալ յօդուածը Հայերի մասին:

Թիւրքաց Հայաստանի բնակիչների ողբալի դրութիւնը ընդհանուր Եւրոպայի ցաւացութիւնը արժանացաւ: Իրաւէս յանի է, Հայաստանի մէջ վերանորոգութիւններ մտցնելու խնդիրը Բերլինի կոնգրեսի քննութեան առարկայ դարձաւ: Այդ հարցին մինչև անգամ առանձին յօդուած է նուիրված, այն է Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածը «Փայլուն Դուռը պարտաւորվեցաւ անտապալ իրագործել այն բարեաւաստութիւնները և վերանորոգութիւնները Հայերով բնակեցրած նահանգների մէջ, տեղական պահանջների հաւասար և ապահովել նրանց վերջերների և քիւրդերի բարբարոսութիւններից: Իր գործադրած միջոցների մասին թիւրքաց կառավարութիւնը տեղեկութիւն կը տայ պետութիւններին, որոնք կը հսկեն նրանց իրագործելու վրա». սա է Բերլինի դաշնագրի յիշեալ յօդուածի իսկական բովանդակը:

Բերլինի դաշնագրիր ստորագրելուց յետոյ շարունակ երկու տարի Բ. Դուռը, կարելի է ասել, ուշ դրութիւն չէր դարձնում այդ վճռի վրա: Իրր պետութիւնների իրանց յանձնած 61-ի մասնաւոր դրութեամբ տարված էին պահանջել Բ. Դռնից, որ նա իրագործէ Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւններին վերաբերեալ Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածը, Բ. Դուռը երկար շաբաթ շարունակ ուշադրեց իր պատասխանը: Իր պատասխանի մէջ Բ. Դուռը յայտնեց, որ պատրաստական աշխատանքներ են կատարվում Հայաստանի վարչական վերակազմութեան համար, մի և նոյն ժամանակ մատնացոյց եղաւ, որ հայերը ամբողջ ազգաբնակութեան 17% են կազմում:

Պետութիւնները Բերլինի դաշնագրի վերաձևների վրա խստութեամբ հիմնվելով, հաստատութիւն չը տուին Բ. Դրան առաջարկութիւններին մեծ մասին: Պետութիւնները իրանց գրութեամբ կէս առ կէս մերժում էին Հայաստանի վարչական բարեփոխման թիւրքաց նախագիծը և գտնում են, որ ֆինանսական հարցի վերաբերութեամբ էլ նախագիծը կատարեալ չէ: Օրինակի համար տեսնում ենք, որ Բ. Դուռը ընդունում է վերանորոգութիւնների հերթական մասնաժողովի ֆինանսական նախագիծը, բայց մի և նոյն ժամանակ մերժում է այն զորձնական միջոցները, որոնց ցոյց է տուել մասնաժողովը ֆինանսական այդ փոփոխութիւնները իրագործելու համար: Պետութիւնների միաձայն գրութիւնը, պահանջելով Բ. Դռնից դատարանների և պոլիցիայի վերանորոգութիւնը և նահանգապետների աւելի անախորժ գրութիւնը, մի և նոյն ժամանակ անկարելի է համարում, որ հայերը տեղական ազգաբնակութեան միայն 17% են կազմում և խորհուրդ է տալիս երկրի մէջ նոր ժողովրդագրութիւն անել, այն պայմանով, որ այդ գործը նորից չուշացնէ վերանորոգութիւնների մտցնելը, որոնց հետ ժողովրդագրութիւնը ոչինչ յարաբերութիւն չունի: Այդ գրութեան մէջ ասված է նոյնպէս, որ պէտք է միջոցներ գտնել ԷԼ

ARCHIVE
http://Archivebeta.Sakhrit.com

բիտանական բնակիչներին քիւրդերի և Ջրաբեզների անկարգութիւնների դէմ ապահովելու համար։ Պետութիւնները հարկաւոր համարեցին Նկատել Բ. Դրան, որ քաղաքային և կրօնական հաւասարութեան և վարչական հակակշռութեանութեան վրա հիմնված վերանորոգութիւնները պէտք է մտցնին երկրի մէջ իրանց անմիջական հրամանը թեան տակ։

Թիւրքիայի պետական կազմակերպութեան վերանորոգելու խնդիրը վաղուց է, որ եւրոպական դիպլոմատիայի ծանր աշխատաքների առարկայ է դարձել։ Ինչպէս յայտնի է, այդ հարցի քննութիւնը յանձնված էր միջազգային մասնաժողովին, որ արդէն յայտնել իր կարծիքը այդ առարկայի մասին։ Թիւրքիայի տարման մասը դեռևս մասնաժողովի քննութեան առարկայ չէ դարձաւ։

Թիւրքայ վարչութեան հարստահարութիւնների մասին Հայաստանի մէջ, տեղական քրիստոնեաների անտանելի դրութեան մասին շատ խօսվեցաւ և գրվեցաւ։ Ուրեմն չարիքը կայ, բայց, մեր կարծիքով, մինչև այժմ ուշադրութիւն չը դարձնվեցաւ այդ չարիքի պատիրը քննելու վրա։ Մենք կարծում ենք, որ միակ չարիքը զինուորական աստուածպատութիւնն է, որ միայն մի կրօն է ճանաչում՝ իսլամ ընդունում է միայն իսլամի ներկայացրած իշխանութիւնը և կատարում է միայն երկնքից բերած Մահմետի օրէնքը։ Ի նկատի առնելով այդ ամենազոր աստուածպատութիւնը, որ շատ դարերի ընթացքում ծանր ճնշման տակ է պահում արևելեան բոլոր քրիստոնեաներին, պէտք էր աշխատել նրա չարագործ ոյժը ոչնչացնելու։ Հ մաբ։ Ամեն կամքից թշնամի տարբերով շրջապատված Հայաստանի քրիստոնեայ ազգաբնակութիւնը թերևս պետութիւնների առանձին հոգատարութեան է կարօտ։ Մեր կարծիքով վարչութեան, դատարանների և պոլիցիայի համար նախագծված վերանորոգութիւնները անկարող են վերջնականապէս բարելաւել գործերի դրութիւնը երկրի մէջ։ Մեր կարծիքով պէտք է մահմետական եկեղեցին բաժանել 0 մասնեան պետութենից, իսկ այդ բաժանը կարելի է անել, վարչական իշխանութիւնը քրիստոնեայ հայերին տալով։ Նահանգապետ մահմետականը իր կրօնակիցների առաջ կրօնի զուտ անան է համարվում, եթէ Ղորանի հրամանների համեմատ չէ գործում, մինչև գեռ քրիստոնեայ նահանգապետները կարող են անկողմնապահ լինել մահմետականների վերաբերութեամբ և դրանով չեն կորցնի իրանց նշանակութիւնը իրանց հարենակցների մէջ։

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 20 սեպտեմբ.

Նաւային ցոյցը մի քանի օրերու համար ետ կը մնայ, և չու ընդհանրապէս կարծիք կայ, որ միջազգային նաւատորմիղը պիտի չուշանայ Վոփոր մտնել, առկախ խնդիրներն լուծելու ամենէն բնական ճամբան ալ այս է։ Իսկ կառավարութիւնը կը կարծէ, որ փափուտի ճամբաներով կրնայ գործերն կարգադրել։ Պէյքոյ բաշալի պատրաստած ծրագիրն կուգան ի գործ դնել, առանց Եւրոպայ պահանջմանցը կարևորութիւն ընծայելու։ Սակայն բուն իսկ այդ ծրագիրն անգամ գործադրելու կարող չեն, անիրականութիւն, մնանկութիւն ամեն կողմ կը տիրէ։

Այս օրերս Կ. Պոլիս հասաւ Անգղիոյ խորհրդարանի անդամ Պ. Պրայս, որ հայկական դատին ջերմ պաշտպանն է, բնական է, որ փառաւոր ընդունելութիւն մը գտնէր հոս։ սակայն ինքն իսկ փափագ յայտնած է թէ ո և է ցոյց չը մէջի իրեն համար, վասն զի քաջ իսկ ըմբռնած է թէ ինչ փափուկ վիճակի մէջ են հայերն կառավարութեան առջև, և թէ որչափ զգոյշ շարժելու պարտական են։ Կ. Պոլիս առանց խոհեմութիւնը ձեռքէ ձգելու ինչ որ կարելի է ընել, զան կրնեն։ Հայ երեսփոխանական պ. Կիւլպէնկեան, որ ձեզ արդէն հնարածանօթ է, փառաւոր սեղան մը տուաւ իւրոնը մէջ ի պատիւ պ. Պրայսի, հրաւիրեալ էին երեսփոխ հայ վ ճառներն և Ս. Պատրիարքը։ Հայ երիտասարդութիւնն ալ իւր կողմանէ կը պատրաստուի մեծ ինչոյզ մը տալ ի Բէյռ, սակայն Ենթէ կարծեր, որ տեղի ունենայ, վասն զի պ. Պրայս երկու օրէն կը մեկնի և նեիմապես անհնար է պէտք եղած պատրաստութիւնը տեսնել, մ նաւանդ որ շատերն կը խրատեն ետ կենալ, թէպէտ և մեք մեծ վտանգ մը չենք տեսներ. կառավարութիւնը լաւ գիտէ, որ մեք բնականապէս պիտի սիրենք և յարգենք մեր դատին պաշտպաններն, Ոչ ցոյցերն իրեն անհաճոյ լինեն կամ անարժեն, այդ երկրորդական կէտն է։ Սակայն մեր ձեռքէն եկած ժամ նաեն ալ այդ ցոյցերն կուզի խոսանել, ինչպէս պ. Պրայսի առթիւ տեղի ունեցաւ։ Պարոնը շրջելով Իզմիր հասած ժամանակ տեղւոյն ազգայինք ընդ առաջ կելնեն նմա, բարի գալուստ կը մաղթեն և կը հրաւիրեն նախանձայի մը, որ կրնեն թէ շատ լաւ եղած է։ Զմիւռնիոյ ազգայինք շատ նրբամիտ են և մի անգամայն լեզուագէտ, լաւ ազդեցութիւն կրնեն պ. Պրայսի վրա, և մեր մէկ բարեկամին կը որեն թէ չենե կարծեր որ պօլսեցիք զմիւռնացիներէն աւելի լաւ ընդունելութիւն մը կարենան ընել։» Պ. Պրայս իրենց կը յայտարարէ թէ «Հայկական դիդիրն իրենց լուսացանէն աւելի լաչող մէնակի մէջ է։» Երբ պարոնը իր մեկին ատտի գէսի Կ. Պոլիս. ան ինքնակամ կը հեռագրեն հոս, որպէս զի ընդ առաջ երթան, զի արդէն պատրաստութիւններ ալ տեսնուած էին. սակայն կառավարութիւնը հեռագրեր կը յանձնէ երկու օր վերջ, որպէսզի պ. Պրայսի Կ. Պոլիս գտնուելէն օր մը վերջ, այնպէս որ դեռ հոս կը սպասէին նմա, երբ Թայմզի Թղթակիցն կառնէ կը տանի դեռ և կը ներկայացնէ պ. Ապդուլլահի։ Այս դէպքին կերպի թէ կառավարութեան ջիղերուն կը դպչի մեր կողմէ առ եւրոպացիս ցոյց տրուելիք շամանկրութիւններն, յայտնի լինեն թէ ոազմանի փոյթ չէ։ Սակայն կարծեմք պ. Պրայս գոհ չը պիտի լինէր, եթէ միայն հ ղիակ ն խոշանոցին վրա իրեն գաղափար տ ղրեր. բնական է որ մեր քաղաքարհրթութեան մէջ որ ած փորը ինչ յանպատիմութիւններս և տեղին ընելու համար ունեցած պատրաստականութիւններս կրնար աւելի ներգործել նորա վրա։ Կիւլպէնկեանց ինչոյզէն վերջը յաջորդ օրն այցելեց Գասը գիւղի Արամեան երկսեռ թաղական վարժարանը, որ լաւ վիճակի մէջ է և գազանի մը կուսայ թէ ամեն թաղերու մէջ թեչպէս գպրոցներն կարգադրած եմք. երկ այցելեց Կեդրօնական Վարժարանը, Ազգ. փոքրիկ մատենադարանը և ներկայ գտնուեցաւ Ղալաթիոյ եկեղեցին Ազգ. ժողովոյ նստին։ Ազգ. ժողովոյ մէջ պ. Պրայս ֆրանսերէն լեզուով ատենաբանութիւն մը ըրաւ, յորում խօսեցաւ հայկական խնդրոյ վիճակին վրա, և յորդորեց որ չը ջեղիւք մինչև չիմա մեր չեսնած ճանապարհէն, ինդրելք ինչ որ կենական է, և մանաւանդ ուշադիր լինեմք որ չը ձ ենդրանիմք զնւրոպա։ Պ. Պրայսի պատասխանեցին յանպարտատիր պ. Տիգրան Դուսուֆեան և պ. Ռ. Պէրլրէան ֆրանսերէն լեզուով։ Այն ճառերուն վրա չենք ուզեր երկարութիւն խօսել, զանոնք արտաքնոյներն տեսնելու առթիւ չուեցայ այսօր, եթէ ուրմար սեպին, կը թարգմանվի կը խրկեմք, բայց աւելի խոհեմ համարեն թերևս իրենք, ամենեին հրատարակութեան չը տալ։ Արդէն հոս չը չրատարակուեցաւ։ Կարծեմք թէ պ. Պրայս գոհ մնացեր է մեր յառաջադիմութիւններն և մասնաւորապէս զարմանք յայտներ է թէ ինչպէս գպրոց, եկեղեցի և եկեղեցականք. փանդոնոց, մատենադարան, Հայաստանի կրթութիւն ամենն մեք կը հոգանք առանց կառավարութեան կողմէ նպաստ մը ընդունելու։ «ուրեմն ինչ բանի համար եղած է ձեր կառավարութիւն» հարցուցեր է. և արդարև զարմանալի է, երկրին ոչ նիւթական, ոչ բարոյական զարգացմանը վայրկեան մը խորշած և նպաստած չէ կառավարութիւնը, և այս տարօրինակ կը թուի եւրոպացւոյ մը համար, որ արեւելքը չը ճանաչեր. իսկ մեք որ գիտեմք թէ ինչ է թիւրքը, մեզ համար շատ բնական է։ Կարծեմք թէ պ. Պրայս ուզղակի Անգղիա պիտի վերադառնայ։ Հայկական նդրոյ մասին պէտք եղած քն արձակ տեղեկութիւններն ի գործ դնելու պատեհութիւնը պիտի ունենայ։

Հայկական խնդրոյ առթիւ անցեալներն գրած էինք թէ երկու հայ անձինք մասնաւոր պաշտօններով կաշխատեն յԵւրոպա։ Ձեր «Մեղուն» այս լուրը «Մշակի» մէջ հրատարակելիս անպատեհ կը գտնէ։ Սակայն կարծեմք թէ վրդովելու տեղի չենք։ Քիչ շատ ցրիաշխատաց լինել գիտեմք, և Կ. Պոլիս գտնուելովնիս կրնամք «Մեղուէ» աւելի լաւ գիտնալ թէ որ լուրերն հաղորդելնիս օգտակար է, ոչը մի սակար, առանց պնդելու թէ անսխալ ենք։— Երկու անձանց Եւրոպա գտնուելն երկար ատենուան գործ էր. մեք չը գրեցինք այն ատեն, զի գիտէինք թէ քիչ շատ գաղտնի է. սակայն ալ երբ տարածուեցաւ, նոր ամեն ոք գիտէ, երբ կառավարութիւնը իւր դեսպանաց ձեռ ոք տուած տեղեկութիւններ կը տուներ, և Կ. Պօլսոյ թիւրքերներն իսկզբան անհարգութիւններ կրնեն և յետոյ կը սկսին բաքի բաց հրատարակել, նոցա անուններն այնուհետև մեք իւր կարևոր գաղտնիք մը դեռ այդ տեղեկութիւնը պահենք, թէպ շատ ծաղրելի կը համարեմք դայս, ուստի թող «Մեղուէ» սիրտը հանդարտ լինի, անգիտաբար մասնութիւն ընելու մեղքն մէջ չենք ելնիր։

Քրդական մեռ թիւն մը հայկեալ գաղափարն միշտ պաշտպանութիւն կը գտնէ թիւրք մամլոյ կողմանէ։ Թիւրքերն կը նկատեն որ տակաւին բարեկարգութեան խօսքն այն ինչ կը լսուի, քրդաց վասուոնքի մէջ փոփոխութիւններ կը տեսնուին և եթէ բարեկարգութիւններն իրականանան, քիւրդերն ի հարկէ սոսկալի սերտ բարեկամութիւն մը պիտի ունենան մեզ հետ. և քաղաքակրթութեան հնարհիւ կանոնաւոր հայեր կրնան լիներ։ Քաղաքական շաչ մը կր սեպեն այդ միութիւնը հաստատելի. քանի որ երկրին բոլոր վարչութիւնը տանկոյ ձեռքն է, շատ դժուար չէ իրենց այդպիսի միութիւն մը կազմել, որ ապագային բաւական դժուարութիւն կրնայ մեզ պատճառել. մեք այս մասին շատ անուարներ կենալու չենք։ Այդ յոգեանձներէն կը իրկինք և ուշադրութիւն կը հրաւիրեմք։

Վանէն եկած տեղեկութիւններն կը հաղորդեն թէ սոսկա պատճառաւ հոն տեղի մէջն դասը շատ նեղութեան մէջ մնված է, մասնաւորապէս արշտատարներն. երկ թ ր ճ մ ա ն ի է ֆ ա ր ի մէջ պ. Մարկոս Նաթանեան, Վանայ արքի լուսաւորեալ և ազգասէր երիտասարդներէն մին, որ փոխատեսչ է վարժարանացի, լաւ նամակ մը կը հրատարակէ և կառաջարկէ, որ բնկերութիւն մը հող սանանէնէ փոխատուութիւն ընել այդ մէջերն դասուն, որ ողորմութիւն չը խնդրեր, այլ աշխատութեամբ ապրելու պատրաստ է, եթէ իրեն ձեռնտուութիւն լինի։ Այս միջոցին որ Վանայ վրայ մասնաւոր ուշադրութիւն կը լլլայ և զան վասնարքանելու քաղաքականութիւն մը կը տիրէ, մեծապէս օգտակար կը լլլայ։ Այսօր Կարիէն հեռագիր եկաւ, որ կը յայտնէ թէ մեսան. 16-ին հանդիսաւոր պատարագ մատուցվեր է վասն նոցա, որք Հայաստանի բարեբարեներն հանդիսական սգոնս օրերն, և Կարնոյ ազգ. ժողովը հնարհանութեան քայլներն տուեր է այդ բարեբարայ։ Քանի որ Օրմանեան Կարնոյ առաջնորդ ընտրուեր է, մեծ փոփոխութիւն կը տեսնուի այն կողմերն. մեծ շարժում կը տիրէ կրթութեան համար. բնկերութիւնը կը մասնան և Բարձր Հայոց բնկերութիւն անուամբ ձեռն ի գործ կարկանեն, բնակարանական սնդուկներ հաստատելու. հետամուտ կը լինեն, վերջապէս իրենց թէ բարոյական և թէ նիւթական զարգացման միջոցներու վրա կը խորհին և կը գործեն. ինքնավարութեան փափագող ժողովուրդ մը այսպէս պէտք է ընել, և հնարաւորս եմս որ Օրմանեան կրմրնէ իւր պաշտօնի բարձրութիւնը և արժանաւոր կերպով կը գործէ։ Սոսկալոց խնդրոյն վրայ ընդարձակ տեղեկութիւններ կրնաք ստանալ Նորատունկեան Լիֆէնդիէն. անցեալ անգամ մոռցանք յիշել, թէ ինքն Սոսկալոց Թեմատաար Կենտրոնական Ցանձնաժողովոյ սակաւաթիւ անդամներէն մին է և մասնաւորապէս լաւ աշխատող էր։

Հայկակ

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍԱՆԵՑ

Դաւրէժ, 20 սեպտեմբերի

«Պարսկ» լրագրի 20 համարում կարդացի մի նամակ, որ գրված էր Դաւրէժից Թորգում ստորագրութեամբ և նորան կից մի ճառ, որպէս թէ մի որիորդ է ասած, իսկ նրա տակ փոխանակ որիորդի ստորագրութեան, ծանկիլել է Մեսրոպ քահանայ Թադիանեանցը այս երկու տառերով Ս. Ի. Փ։ Նշանակ որ Թորգում անուան տակ էլ թաղնվողն, անկասկած, լրիսոլ քահանան է, որ իր ոճից էլ յայտնի է, և մանաւանդ որ մեր քաղաքում ոչ ոք չը կայ նրանից գոհ, որ նրա և իր դասեր դլխին արդեան դժամանութիւններ շռայլէ։

Պ. Թորգումը սխալվում է, ասելով թէ սրանից առաջ ոչինչ ազգային շարժումնը չը կար Դաւրէժում, այլ երկու պրոսեղի պարտներ եղան բոլոր բաները կարգի դնողները։ Նրանց հետ միասի դարձել են մեր դաւրէժցիք հաւատարմութիւնից դնարված 5 պատուաւոր անձինք, որոնք թէ դրամով և թէ ջերով ոչինչ նուազ օգտակար են եղած ազգին, քան երկու լիշեալ պարտնները, որոց թաղած բարի միջառանին էլ մեզ յարդէն է միմեանց չափ, որովհետև բոլորը միասին աշխատել են ազգի օգտի համար։ Բայց ոմանց դրվել և ոմանց պաղծը ուրանալ,— անխիղճ և կեղծաւոր մարդուն միայն յատուկ է։

Գրանից յետոյ պ. Թորգումը յարձակվում է մեր ընկերգրաբանի վրա, թէ նա յետին խեղճութեան մէջ է և թէ նրա գրքերն ու լրագիրները մինչերին որս են դառնում։ Մասամբ ուղիղ է, որովհետև Փափաղեանը մի տարի ընկերգրատանն տեսչութիւն անելով, հաւաքից նրան վերջին խեղճութեան էր անխոյի ընտրութիւնամբ։ Իսկ երբ ընկերգրատանական ընկերութիւնը նրան հեռացրեց, այժմս ընդհակառակն շատ բարկացած է, և ունի հրկեղ տեսչութիւն, բաւականաչափ դրամագրեց, 50-ի չափ բաժանորդներ և յանձնաղներ, բազմաթիւ գրքեր և լրագիրներ, որոնք զոհացնում են բոլոր մուտք գործողներին, բացի Փափաղեանից, որ գիտատրաքնին ունի միւս անգամ տեսուչ լինելու և մնացածն էլ քանդելու։

Նրան. իրաւ է, որ Ագուլիսից բերել տուին, բայց մեզ վրա մի թեռ է դարձած։ Նա մեզ ոչինչ օգուտ չը տուեց ոչ Լիլիպայի և ոչ Ղալի խրժանում։ Եւ ինքը լինելով մեր Արամեան գպրոցի նախկին աշակերտներից, նրա դասերը լսած եմ, և նրան համեմատելով պ. Մելիք-Յակոբեանի, պ. Գիւլզատեանի և պ. Աֆտանդիլի հետ, տպէս եմ համարում, որովհետև նա ոչինչ չ համեմատում այժմեան մանկավարժութիւնից, այժմեան պաշտնիից. նա Վանի գռեհկերներից է. նա բառը հնչում է, որպէս փառ, գանակը որպէս թանաք։ Զարհանալ աշակերտները մինչև անգամ նրա դասն ասելու ձեւ և հնչմունք։ վրա մինչ ծիծաղում էին. մանաւանդ այս վերջին տարին, երբ նա առժամանակեայ կառավարիչ էր Արամեան գպրոցին (բայց ոչ տեսչ. որպէս ինքն է գրում), մինչև որ հոգաբարձութիւնը նրան բացասական պատասխան տալով, հեռացրեց Արամեան գպրոցից։

Թատրոնական ընկերութիւնը, ինչպէս և Աւարայրեան ընկերութիւնը երբէք նրա խորհրդով և համոզեցնելով չեն հիմնված. դրանք պէտաւոր ստեր են։ Սրանցից առաջինը Արամեան գպրոցի ուսուցիչներն և մի քանի երիտասարդների մարդ ծնունդ է և նրանց աշխատութեամբ հիմնված։ Իսկ երկրորդը մի ընկերութիւն է, որ աւելի պ. Նազար Դարոյեանցի ջանքով և աշխատութեամբ է կազմված, և այդ ընկերութիւնը ուրիշ լաւերին չը գրանելով, հրաւիրեց Մեսրոպ քահանային և իր ազգական, որպէս կատարակ վարժապետներ, որոնք ոչինչ օգուտ չը տարան յետոյ, այսօր էլ կամենում են իրանց գովել տալ։ Սակայն մեր նրանց լաւ նենգ ճանաչում. Մեսրոպ քահանան դարերին ծանոթ գրքաց տիրացու Մարտիրոսն է. իսկ երբ նա քահանայ է ձեռնադրված, իր անունը փոխելով Մեսրոպ է դնում։ Իր դուստրն էլ էր Սարգսոն կարգացող աղջիկներից մեծ առաւելութիւն չունի, նա ոչ դիա ինչ կարգալ ընդունակութիւն գիտէ, և այլապէս էլ չը կարող լինել, որովհետև արանից 60 տարի առաջ Վանում ով ուսում գիտէր, որ տիրացու Մարտիրոսին ուսում տար. և նա էլ իր աղջիկն սովորցնէր։ Իրաւունք ունի մեր տէր-Մեսրոպը. մեր հոգաբարձութիւնը ինչու պէտք է այդպիսի օտարականներին պատուոն յանձնել, ուստիկ տալ և իր հաշուով քանի տարիներ պահպանել, որ նրանք էլ վերջումը ոչ որին չը ճանաչեն, ոչ զրի արածը չիանան, այլ և ուրիշների արածներն էլ իրանց վերագրեն։

Եւ սակայն ստիպվեցայ այս նամակը գրել։ Բայց որովհետև տէր հայրը, հրապարակ դուրս գալով, աշխատում է ամեն արժանաւորութիւն և գովասանութիւն իրան վերապահել և ոչ զրի չէ տեսնում և Դաւրէժի հասարակութեանն էլ առ ոչինչ համարում, ուրեմն կարժէր որ նրա վարագոյրը փոքր ինչ բաց անեին։ Տէր Մեսրոպի այդպէս գրելու պատճառը յայտնի է. ուժ նա մուշտարի է մնում, որ մի ուրիշ քաղաք գնայ և մի քանի տարի էլ այնտեղ անցկ ցնէ, որովհետև այստեղ նրա հաշիւը վերջացած է, այստեղ ամենքը հասկացան թէ նա ինչ հոգու տէր մարդ է։

Գանձապահ ազգ. Ընթերցարանի Գէորգ Շանշեանդարեանց

Թարգմիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ